ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

7 հուլիսի 2014 թվականի **թիվ 101** քաղ. Մոսկվա

Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 28-ի թիվ 299 որոշման 2-1 կետում փոփոխություն կատարելու մասին

«Սննդամթերքի մակնշման մասին» (ՄՄ ՏԿ 022/2011) եւ «Սննդային հավելումների, բուրավետիչների եւ տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգության պահանջներ» (ՄՄ ՏԿ 029/2012) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերն ուժի մեջ մտնելու առնչությամբ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց**.

1. «Մաքսային միությունում սանիտարական միջոցների կիրառման մասին» Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 28-ի թիվ 299 որոշման 2-1 կետը յոթերորդ պարբերությունից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ պարբերություններով՝

«- մինչեւ 2013 թվականի հուլիսի 1-ը՝

1-ին բաժնի մասով՝ «Սննդամթերքի անվտանգությանը եւ սննդային արժեքին ներկայացվող պահանջներ», «Սննդամթերքի մակնշման մասին» (ՄՄ ՏԿ 022/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող սննդամթերքի մակնշմանը ներկայացվող պահանջների մասով՝ նշված Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու առնչությամբ.

22-րդ բաժնի մասով՝ «Սննդային հավելումներին եւ բուրավետիչներին ներկայացվող անվտանգության պահանջներ» եւ 23-րդ բաժնի մասով՝ «Տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգությանը ներկայացվող պահանջներ», «Սննդային հավելումների, բուրավետիչների եւ տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգության պահանջներ» (ՄՄ ՏԿ 029/2012) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող արտադրանքին ներկայացվող պահանջների մասով՝ նշված Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու առնչությամբ.»:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից սկսած 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի

կոլեգիայի նախագահ՝ **Վ. Խրիստենկո**